ՀԱՆՁԻՆ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՀԵՂԻՆԱԿԻ ԵՍ ԳՏԱ ԻՄ ՄՇՏԱԿԱՆ ԶՐՈՒՑԱԿՑԻՆ

Իմ գիտական կենսագրությունը մասամբ ոչ սովորական է, երկատված: Այն սկսվել է տակավին ուսանողական տարիներին Լենինգրադի Էրմիտաժում, երբ իմ երկրորդ ուսուցիչը (առաջինը իմ հայրն էր)՝ մեզանում լավ հայտնի Իգոր Միխայիլի Դյակոնովը, ինձ հանձնարարեց մշակել, այսինքն՝ կարդալ, թարգմանել, մեկնաբանել և հրատարակել հելլենիստական դարաշրջանի բաբելոնյան սեպագիր տախտակների էրմիտաժյան հավաքածուն: Հետագա ողջ կյանքում ասուրագիտությունից ես այլևս չեմ բաժանվել: Արտասահմանում հրատարակել եմ Բեռլինի առաջավորասիական թանգարանի համաբնույթ հավաքածուն ու հելլենիստական Բաբելոնի քաղաքին վերաբերող տասնյակ հոդվածներ, որոնք այստեղ՝ Հայաստանում, գործնականորեն ոչ ոքի հայտնի չեն:

Հայագիտություն մուտք եմ գործել արդեն ասպիրանտ եղած ժամանակ, բայց դարձյալ Հին Հայաստանի քաղաքին վերաբերող թեմայով, որը հետո վերաճեց նրա սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային պատմության: Ինձ ամբողջապես գրավեց Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Հանձին «Հայոց պատմության» հեղինակի՝ ես գտա իմ մշտական զրուցակցին: Նա ինձ գերեց իր խոր, գերբնական համակարգվածությամբ, հոգեբանականությամբ և առեղծվածայնությամբ: Ընդ որում՝ նրա գլխավոր հանելուկայնությունը այն չէ, ինչպես բոլորը կարծում են, թե որ դարում է նա ապրել ու ստեղծել, այլ այն, թե որտեղից է հայթայթել իր հարստագույն տեղեկությունները ոչ միայն իրենից ոչ վաղ անցյալի մասին, այլև իրենից կեսհազարամյակ, իսկ երբեմն էլ մեկ ամբողջ, նույնիսկ երկու հազարամյակ առաջ: Հենց այդ ուղիների, ինչպես նաև նրա հայթայթած տեղեկությունների մշակումն ու մատուցման եղանակների որոնումը դարձան իմ վերջին 3-4 տասնամյակների հետազոտությունների առարկան: Իբրև միջանկյալ արդյունք՝ «Հայոց պատմության» գրաբարից ռուսերեն թարգմանությունը եղավ, որ ես հրատարակեցի Մ.Էմինի թարգմանությունից մեկ հարյուրամյակ անց:

Ես հիմա էլ «բռնված եմ» Մովսես Խորենացու առեղծվածներով և մենագրություն եմ պատրաստում նրա «Պատմությունը» կազմող համակարգերի շուրջ, այդ թվում՝ Հայոց եկեղեցու 1700-ամյակի՝ Հայաստանում կրոնի էվոլյուցիայի մասին, ներառյալ նրա բեկումնային պահը՝ հայերի դարձը քրիստոնեություն:

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ